

ՎՃԱՐԱՅԻՆ ԲԱՐՏԵՐ

Ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում ենք հետևյալ վճարային քարտերը՝ ArCa Classic լոկալ քարտը (որը հնարավոր է գործածել միայն Հայաստանի տարածքում) և MasterCard (Standard, Gold, Maestro) ու Visa (Classic, Gold) միջազգային քարտերը (որոնք կարելի է գործածել ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում): Քարտային հաշիվները բացում և վարում ենք դրամով, դոլարով, եվրոյով և ռուբլով: MasterCard (Standard, Gold) և Visa (Classic, Gold) քարտերը թողարկվում են DDA չիպով (հանդիսանում են առավել անվտանգ և ապահով միկրոպրոցեսորային քարտեր):

Maestro և ArCa Classic դեբետային քարտերն ունեն օվերդրաֆտ*, իսկ MasterCard (Standard, Gold) և Visa (Classic, Gold) կրեդիտային քարտերը՝ վարկային գիծ և օվերդրաֆտ* ստանալու հնարավորություն: ArCa, Maestro, MasterCard Standard քարտերը կարող են ծառայել նաև որպես աշխատավարձային քարտեր, որոնց, ձեր ցանկության դեպքում, կարող է փոխանցվել ձեր աշխատավարձը:

Վճարային քարտերը թողարկվում են 3 (երեք) տարի ժամկետով:

Քարտերը տրամադրում և սպասարկում ենք մեր կողմից հաստատված Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագների համաձայն: Սակագներով սահմանված բոլոր տեսակի միջնորդավճարները գանձում ենք քարտային հաշվից անակցեպտ կերպով: Վճարային քարտերին վերաբերող մանրամասն տեղեկատվությանը (այդ թվում քարտերի թողարկման, քաղվածքների տրամադրման, գործարքների բողոքարկման, արտարժույթով արտահայտված գործառնությունների կատարման և այլ անհրաժեշտ տեղեկատվությանը) կարող եք ծանոթանալ այստեղ:

Քարտերի ստացման դիմում կարող եք ներկայացնել ինչպես մեր գործունեության վայրում, այնպես էլ հեռակառավարման համակարգերի միջոցով (օնլայն)՝ մեր կայքի կամ բջջային հավելվածի միջոցով ներկայացված էլեկտրոնային հայտ/դիմում-ի հիման վրա:

Մեր և ձեր պայմանագրային փոխհարաբերությունները կարգավորվում են ՀԱՄԱԼԻՐ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ, որը հրապարակային առաջարկ (օֆերտա) է և ձեր կողմից համարվում է ընդունված այն պահից, երբ առձեռն կամ օնլայն համակարգերի միջոցով մեզ եք ներկայացնում պատշաճ լրացված և վավերացված բանկային ծառայություններից օգտվելու հայտ/դիմում):

Ուշադրություն - * Մենք վարկային գծերի (օվերդրաֆտների) տրամադրման հրապարակային առաջարկ չենք ներկայացնում: Դրանք կարող են տրամադրվել մեր Լիազոր մարմնի որոշմամբ՝ ներքին ակտերով սահմանված պայմաններով և ձեզ հետ փոխադարձ կնքված պայմանագրի հիմքերով:

ԱՆՐԱԺԵՃՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վճարային քարտերով կատարվող գործառնություններ

Վճարային քարտերով կարող եք՝

- Կանխիկացնել Ձեր քարտային հաշվին առկա միջոցները բանկոմատներից (ATM) և կանխիկացման կետերից (POS տերմինալներից):
- Կատարել անկանխիկ վճարումներ առևտրի և սպասարկման կետերում (ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ խանութներում, ռեստորաններում, հյուրանոցներում և սպասարկման այլ կետերում):
- Կատարել կոմունալ վճարումներ՝ բանկոմատների միջոցով կամ օնլայն (www.arca.am-ում գրանցելով վիրտուալ քարտ):
- Օնլայն գործարքներ կատարել (վճարումներ, գնումներ):
- Քարտից քարտ գումար փոխանցել՝ բանկոմատների միջոցով կամ օնլայն:

- Մեր online բանկինգ ծառայությունից օգտվելու պարագայում դուք հնարավորություն կունենաք առանց մեզ այցելելու կատարել դրամական միջոցների համալրում (ընթացիկ հաշվից՝ քարտային հաշիվ) և անմիջապես տնօրինել այդ գումարները՝ ձեր քարտի միջոցով:

Նշում. Քարտային հաշվով կատարվող դրամական շարժը վերահսկելու նպատակով ակտիվացնում ենք SMS-տեղեկացում ծառայությունը (դուք կարող եք դիմում գրել և հրաժարվել SMS տեղեկացումների ծառայությունից): Օնլայն վճարումներ իրականացնելիս կարող եք օգտվել 3D Secure ծառայությունից:

Օգտակար տեղեկատվություն

Քարտային վճարումներ կատարելիս անհրաժեշտ է հիշել.

- Քարտերով կարող եք վճարումներ կատարել այն առևտրի ու սպասարկման կետերում, որտեղ փակցված է տվյալ քարտային համակարգի լոգոտիպը:
- Քարտով վճարում կատարելիս՝ մինչև անդորրագիրը ստորագրելը, հավաստիացնք, որ անդորրագրում նշված գումարը համապատասխանում է ձեր գործարքի գումարին:
- Քարտով վճարելիս միշտ պահեք քարտը ձեր տեսադաշտում:
- Եթե հրաժարվում եք գնումից, ապա պահանջեք չեղյալ համարել (VOID) ձեր վճարումը և պահեք համապատասխան անդորրագիրը մինչև հերթական քաղվածքի ստացումը՝ համոզվելու, որ հաշվից գանձում չի կատարվել:

Խորհուրդներ արտերկիր մեկնողներին.

Նախքան մեկնելը՝

- Ստուգեք ձեր քարտի գործողության ժամկետի ավարտը (expiry date):
- Ստուգեք Ձեր հաշվին առկա դրամական միջոցների մնացորդը:
- Գրի՛ առեք ձեր քարտի 16-նիշանոց համարը և բոլոր այն հեռախոսահամարները, որոնցով կարող եք զանգահարել մեզ՝ արտերկրում ձեր քարտի կորստի կամ գողության դեպքում:
- Ե՛լու՛ք մեզանից քարտով կատարվող վճարային սահմանաչափերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Նշված սահմանաչափերը ձեզ չբավարարելու դեպքում կարող եք դիմել մեզ՝ դրանք ավելացնելու:

Նպատակով (սահմանաչափերի գերազանցման հետևանքով գործարքի մերժումից խուսափելու համար):

Նշում. Պահպանեք քարտով կատարված գործարքների անդորրագրերը և վերադառնալուց հետո համեմատեք դրանք քաղվածքի գործարքների հետ:

Արտարժույթով գործառնություններ կատարելիս անհրաժեշտ է իմանալ.

- Քարտային գործառնությունների իրականացման ժամանակ արտարժույթի փոխարժեքները կարող են տարբերվել, որի համար մենք պատասխանատվություն չենք կրում:
- «Արմենիան Քարդ» Վճարահաշվարկային համակարգի անդամ բանկերի սպասարկման կետերում և բանկոմատներում քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքներ կատարելիս որպես փոխարժեք կիրառվում է «Արմենիան Քարդ»-ի կողմից գործարքի հաշվանցման օրվա դրությամբ տվյալ արտարժույթի համար սահմանված մեր փոխարժեքը:
- Այլ բանկերի սպասարկման կետերում և բանկոմատներում գործարքներ կատարելիս որպես փոխարժեք կիրառվում է MasterCard վճարահաշվարկային համակարգի կողմից գործարքի հաշվանցման օրվա դրությամբ տվյալ արտարժույթի համար սահմանված մեր փոխարժեքը:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- Ապահովեք ձեր PIN ծածկագրի գաղտնիությունը (այն պետք է պահպանել գաղտնի և հասանելի չդարձնել այլ անձանց): PIN ծածկագրով կատարված բոլոր գործառնությունների պատասխանատվությունը կրում եք դուք:

Մենք պատասխանատվություն չենք կրում ձեր PIN ծածկագիրը երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով վճարային քարտի ոչ օրինական և ձեր կողմից չարտոնված օգտագործման համար:

- Քարտի կորստի կամ գողության դեպքում անմիջապես զանգահարե՛ք մեզ (+374 10) 56-20-36, (+374 10) 58-29-77 հեռախոսահամարով կամ «Արմենիան Քարդ» վճարահաշվարկային համակարգի (+374 10) 44-03-80 հեռախոսահամարով հայտնելով քարտի ստացման դիմումի մեջ ձեր կողմից նշված գաղտնաբառը: Զանգից անմիջապես հետո քարտի գործողությունը կդադարեցվի:
- Քարտի կորստի կամ գողության մասին ՄԵԶ տեղեկացնելու հետաձգումը կարող է հանգեցնել ձեր քարտով այլ անձանց կողմից գործարքների կատարմանը:
- Մենք պատասխանատվություն չենք կրում ձեզ հասցրած այն վնասի համար, որը կատարվել է քարտը կորցնելու և մեզ հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում:
- Դուք պատասխանատվություն եք կրում քարտով կատարված բոլոր գործառնությունների համար մինչև այն պահը, երբ տեղեկացնում եք մեզ կորստի կամ գողություն պատճառով քարտի գործողությունը դադարեցնելու անհրաժեշտության մասին:

TRANSFER CARD

Առաջարկում ենք անվճար ArCa Transfer Card՝ դրամով, դոլարով, եվրոյով կամ ռուբլով: Այս քարտի միջոցով ձեզ փոխանցված գումարները կարող եք ստանալ առանց մեզ այցելելու՝ ընդամենը մեկ զանգի միջոցով: Transfer Card ենք տրամադրում այն հաճախորդներին, որոնք արտերկրից պարբերաբար գումարներ են ստանում մեր կողմից սպասարկվող արագ դրամական փոխանցումների համակարգերով:

Դուք կարող եք տնօրինել Transfer Card-ի միջոցով ձեզ փոխանցված գումարները (կանխիկացնել ATM-ից կամ POS-ից, իրականացնել անկանխիկ վճարումներ)՝ հեռախոսազանգի միջոցով հայտնելով ձեր և փոխանցման տվյալները:

Transfer Card-ը ArCa լոկալ վճարային քարտ է, որը կարող է օգտագործվել միայն արագ դրամական փոխանցումների համակարգերով ստացվող գումարների վճարման նպատակով:

Ուշադրություն. Եթե պատվիրել եք դրամային արժույթով Transfer Card, ապա ձեր քարտային հաշվին այլ արժույթներով ստացված գումարները փոխարկվում են դրամի (արտարժույթի փոխանակումը կատարվում է՝ փոխանակման պահին մեզ մոտ գործող անկանխիկ առքի փոխարժեքով):

Պատվիրման և ստացման կարգը

- Transfer Card ստանալու համար կարող եք դիմել մեր Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ:
- Transfer Card պատվիրելու նպատակով անհրաժեշտ է լրացնել համապատասխան դիմում ներկայացնելով անձնագիր և սոցիալական քարտ կամ այն չունենալու մասին տեղեկանք, կամ միայն նույնականացման քարտ:
- Պատվիրված քարտը կարող եք ստանալ դիմումը ներկայացնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

Transfer Card-ին փոխանցված գումարների ստացման կարգը

- Արագ դրամական փոխանցումների համակարգերով ստացված գումարները Transfer Card-ին հաշվեգրելու նպատակով անհրաժեշտ է՝
- Զանգահարել 010 56 20 36, ներքին 7777 հեռախոսահամարին (ուշադրություն՝ հեռախոսազանգը ծայնագրվում է),
- Հայտնել մեր կողմից պահանջվող տվյալները և փոխանցման կողը, Սոistream համակարգի դեպքում նաև գումարի չափը և արժույթը:
- Վերոնշյալ տվյալները հայտնելուց հետո մեր համապատասխան աշխատակիցը կատարում է զանգահարողի նույնականացում, որից հետո փոխանցված գումարը մուտքագրվում է տվյալ անձի Transfer Card-ին:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- Ապահովվեք ձեր PIN ծածկագրի գաղտնիությունը (այն պետք է պահպանել գաղտնի և հասանելի չդարձնել այլ անձանց): PIN ծածկագրով կատարված բոլոր գործառնությունների պատասխանատվությունը կրում եք դուք: Մենք պատասխանատվություն չենք կրում ձեր PIN ծածկագիրը երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով վճարային քարտի ոչ օրինական և ձեր կողմից չարտոնված օգտագործման համար:
- Քարտի կորստի կամ գողության դեպքում անմիջապես զանգահարե՛ք մեզ (+374 10) 56-20-36, (+374 10) 58-29-77 հեռախոսահամարով կամ «Արմենիան Քարդ» վճարահաշվարկային համակարգի (+374 10) 44-03-80 հեռախոսահամարով հայտնելով քարտի ստացման դիմումի մեջ ձեր կողմից նշված գաղտնաբառը: Զանգից անմիջապես հետո քարտի գործողությունը կդադարեցվի:
- Քարտի կորստի կամ գողության մասին ՄԵԶ տեղեկացնելու հետաձգումը կարող է հանգեցնել ձեր քարտով այլ անձանց կողմից գործարքների կատարմանը:
- Մենք պատասխանատվություն չենք կրում ձեզ հասցրած այն վնասի համար, որը կատարվել է քարտը կորցնելու և մեզ հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում:
- Դուք պատասխանատվություն եք կրում քարտով կատարված բոլոր գործառնությունների համար մինչև այն պահը, երբ տեղեկացնում եք մեզ կորստի կամ գողություն պատճառով քարտի գործողությունը դադարեցնելու անհրաժեշտության մասին:

GIFT ՔԱՐՏԵՐ

Ցանկանում եք նվեր գնել, սակայն դժվարանում եք ընտրության հարցում: Առաջարկում ենք ArCa քորբենդային Gift (նվեր) քարտեր: Gift քարտը նվերի հիանալի տարբերակ է՝ ցանկացած ճաշակի մարդու համար:

Dalma Gift Card կարելի է ձեռք բերել միայն Dalma Garden Mall-ի ինֆոկետից՝ անձնագրով կամ ID քարտով: Քարտը տրամադրվում է հենց տեղում: Այն հնարավորություն է տալիս գնումներ կատարել Dalma Garden Mall-ի առևտրի, սննդի, սպասարկման և ժամանցի բոլոր կետերում:

Քարտի գումարի չափը՝ 10.000-200.000 դրամի սահմաններում, որոշում եք Դուք:

Քարտը տրամադրվում է գեղեցիկ փաթեթավորմամբ՝ դառնալով ցանկալի նվեր յուրաքանչյուրի համար:

Retail Group Armenia Gift Card կարելի է ձեռք բերել միայն Retail Group Armenia-ի վաճառքի կետերից՝ Zara, Massimo Dutti, Stradivarius, Gap, Pull and Bear, Bershka, Miss Selfridge, Garage, Primadonna, Jennyfer, NewLook, Zippy, Wallis, Charles and Keith, Sergeant Major, Topshop, Marks and Spencer, Quiz, Accessorize, Flormar, Monsoon, Oysho, Tap, laSenza, Quiz, F&F:

Քարտի գումարը Դուք եք որոշում 10.000-200.000 դրամի սահմաններում:

Քարտը տրամադրվում է տոնական փաթեթավորմամբ:

ԱՆՅՐԱԺԵՃՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

GIFT քարտի տրամադրման պայմանները

Վճարահաշվարկային համակարգը	ArCa
Քարտի տեսակը	Անանուն
Արժույթը	ՀՀ դրամ
Գործողության առավելագույն ժամկետը	3 ամիս
Լիցքավորվող նվազագույն գումար	10.000 ՀՀ դրամ
Լիցքավորվող առավելագույն գումար	200,000 ՀՀ դրամ
Վերալիցքավորման և վերաթողարկման հնարավորություն	Չվերալիցքավորվող և չվերաթողարկվող

GIFT քարտի սպասարկման պայմանները

- Քարտը տրամադրվում է անվճար և սպասարկվում է առանց վճարի:

- Քարտը գործում է մինչև Քարտի դիմերեսին նշված ամսի վերջին օրը ներառյալ:
- Քարտերի լիցքավորումն իրականացվում է Բանկի վճարային տերմինալների, ինչպես նաև Telcell, EasyPay և Idram վճարային տերմինալների միջոցով, ընդ որում Բանկի վճարային տերմինալի միջոցով լիցքավորում իրականացնելիս, Բանկը լիցքավորման համար միջնորդավճար չի գանձում:
- Քարտերի մնացորդի նկատմամբ Բանկի կողմից տոկոսագումարներ չեն վճարվում:
- Քարտի գործողության ժամկետի ավարտի կամ Քարտի կորստի դեպքում Քարտը վերաթողարկման ենթակա չէ:
- Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանին հասցված այն վնասի համար, որը հասցվել է Քարտը կորցնելու, Քարտապանի կողմից Քարտն ու PIN կոդը այլ անձի փոխանցելու, ինչպես նաև Քարտի գործողության ժամկետի ավարտի հետևանքով:
- Քարտերի գործողության ժամկետի ավարտից հետո Քարտերում առկա չօգտագործված մնացորդները գրոյացվում են և չեն կարող որևէ կերպ օգտագործվել, փոխանցվել այլ Քարտի կամ հետ պահանջվել Քարտապանի կողմից:
- Բանկը պատասխանատվություն չի կրում իր հսկողության տիրույթից դուրս տեղի ունեցած իրադարձությունների համար:

MASTERCARD IDRAM

Առաջարկում ենք ձեռք բերել «Իդրամ» ընկերության հետ համատեղ թողարկած MasterCard Standard Co-branded միջազգային վճարային քարտերը: Այս քարտերով դուք կարող եք ձեր քարտային հաշվից գումար կանխիկացնել ինչպես Հայաստանում և Արցախում, այնպես էլ ավելի քան 200 երկրում գործող բանկումատներից և կանխիկ տրամադրման կետերից: Դուք կարող եք նաև անկանխիկ վճարումներ իրականացնել աշխարհի տասնյակ միլիոնավոր առևտրի և սպասարկման կետերում, ինչպես նաև վիրտուալ միջավայրում:

Ընդհանուր տեղեկատվություն

- Քարտը վավեր է տրամադրման պահից երեք տարի: Այն գործելու է մինչև քարտի դիմերեսին նշված ամսվա վերջին օրը:
- Եթե քարտի ժամկետը լրանալուց հետո ցանկանում եք վերաթողարկել այն, ապա պետք է 30 բանկային օր առաջ համապատասխան դիմում ներկայացնեք:
- Քարտի երեսին նշված է 16 նիշ, որը ձեր քարտի համարն է:
- Քարտը ստանալու պահին դուք պարտադիր պետք է ստորագրեք դարձերեսին հատուկ նշված դաշտում: Սպասարկման կետերում անկանխիկ գործառնություններ իրականացնելիս սպասարկող աշխատակիցը կարող է համեմատել քարտի դարձերեսի ստորագրությունը գործարքի իրականացման անդորրագրի ստորագրության հետ:
- Ձեզ կտրամադրվի չորսնիշանի PIN կոդ, որի գաղտնիության ապահովման պատասխանատվությունը կրում եք դուք: Խորհուրդ ենք տալիս վճարային քարտը և PIN կոդը չպահել միասին: Մենք պատասխանատվություն չենք կրում ձեր PIN կոդը երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով քարտի ոչ օրինական և ձեր կողմից չարտոնված օգտագործման համար:
- PIN կոդը երեք անգամ հերթականորեն սխալ մուտքագրելու դեպքում, անկախ փորձերի միջև ընկած ժամանակահատվածից, քարտի գործողությունը կասեցվում է:
- Քարտի ապակասեցման համար պետք է ներկայանաք մեզ մոտ և վճարեք ապարգելափակման միջնորդավճարը, որից հետո քարտի գործունեությունը կվերականգնվի:
- Քարտի դարձերեսին սպիտակ ուղղանկյան մեջ, դաջված է եռանիշ թիվ, որը Ձեր քարտի CVV կոդն է: Այն պահանջվում է ոչ երես առ երես գործարքներ իրականացնելիս (օրինակ՝ ինտերնետ միջավայրում գործարքների դեպքում):

- Դուք կարող եք ձեր քարտով գործողություններ իրականացնել քարտային հաշվի արտարժույթից տարբերվող արժույթով, բացառությամբ Հայաստանի և Արցախի տարածքում բանկոմատների միջոցով կանխիկացման գործառնություններից և առևտրի ու սպասարկման կետերում գործարքներից, որոնք իրականացվում են միայն դրամով:
- Պահպանեք քարտով գործառնությունների բոլոր վճարային փաստաթղթերը՝ մինչև քարտային հաշվի քաղվածքի ստացումը՝ դրանք համեմատելու նպատակով: Քարտի օգտագործման յուրաքանչյուր ամսվա համար տրամադրում ենք հաշվի քաղվածք (մինչև հաջորդ ամսվա 7-ը)՝ քարտի տրամադրման դիմումում ձեր նշած եղանակով:
- Քաղվածքում նշված գործարքների և իրականում կատարված ծախսերի անհամապատասխանության դեպքում կարող եք ներկայանալ մեզ մոտ և գրավոր բողոքարկել նշված գործարքը: Գործարքների բողոքարկման դեպքում հետգանձումների նկատմամբ կիրառվում են «ԱրՔա» և MasterCard վճարահաշվարկային համակարգերի հետգանձման կանոնները:
- Քարտով գործարքներ իրականացնելիս ձեր քարտային հաշվից կգանձվեն միջնորդավճարներ՝ համաձայն քո-բրենդ քարտերի տրամադրման և սպասարկման սակագների:
- Քարտային գործարքներով ռիսկերի նվազեցման նպատակով սահմանել ենք օրական կանխիկացման սահմանաչափ՝ 600,000 (վեց հարյուր հազար) դրամ, և գործարքների առավելագույն քանակ՝ 10 գործարք:
- Քարտը կորցնելու դեպքում պարտավոր եք անմիջապես մեզ տեղյակ պահել հեռախոսազանգով, իսկ եթե չեք կարողանում կապվել մեզ հետ, ապա պետք է զանգահարեք «Արմենիան Քարդ» պրոցեսինգային ընկերություն՝ (+37410) 44 03 80 շուրջօրյա հեռախոսահամարով:
- Ցանկության դեպքում, բացի հիմնական քարտից, կարող ենք տրամադրել լրացուցիչ քարտ՝ երեխաների կամ ընտանիքի այլ անդամների համար ձեր քարտային հաշվից օգտվելու նպատակով:

Ուշադրություն՝

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել մեր Վճարային գործիքների բաժին՝ (+37410) 58 29 77 հեռախոսահամարով:

Քո-բրենդ քարտերի տրամադրման և սպասարկման սակագներին կարող եք ծանոթանալ այստեղ:

ԿԵՆՍԱԹՅՈՒՆԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

Կենսաթոշակառուներին առաջարկում ենք Maestro կենսաթոշակային վճարային քարտեր՝ միայն կենսաթոշակների գումարների սպասարկման նպատակով: Քարտերը տրամադրում ենք Սոցիալական ապահովության պետական ծառայության հետ 2011թ. հունվարի 21-ին կնքած պայմանագրի համաձայն:

Քարտերի ստացման դիմում կարող եք ներկայացնել մեր Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ:

Ծանոթագրություն - Կենսաթոշակառու՝ անձ, ում կենսաթոշակը վճարվում է անկանխիկ եղանակով, Բանկում բացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Կենսաթոշակ՝ կենսաթոշակի, պատվովճարի, դրամական օգնության և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումարը:

ԱՆՐԱԺԵՆՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վճարային քարտերով կատարվող գործառնություններ

Վճարային քարտերով կարող եք՝

- Կանխիկացնել Ձեր քարտային հաշվին առկա միջոցները բանկոմատներից (ATM) և կանխիկացման կետերից (POS տերմինալներից):

- Կատարել անկանխիկ վճարումներ առևտրի և սպասարկման կետերում (ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ խանութներում, ռեստորաններում, հյուրանոցներում և սպասարկման այլ կետերում):
- Կատարել կոմունալ վճարումներ՝ բանկոմատների միջոցով կամ օնլայն (www.arca.am-ում գրանցելով վիրտուալ քարտ):
- Օնլայն գործարքներ կատարել (վճարումներ, գնումներ):
- Քարտից քարտ գումար փոխանցել՝ բանկոմատների միջոցով կամ օնլայն:
- Մեր online բանկինգ ծառայությունից օգտվելու պարագայում դուք հնարավորություն կունենաք առանց մեզ այցելելու կատարել դրամական միջոցների համալրում (ընթացիկ հաշվից՝ քարտային հաշիվ) և անմիջապես տնօրինել այդ գումարները՝ ձեր քարտի միջոցով:

Նշում. Քարտային հաշվով կատարվող դրամական շարժը վերահսկելու նպատակով ակտիվացնում ենք SMS-տեղեկացում ծառայությունը (դուք կարող եք դիմում գրել և հրաժարվել SMS տեղեկացումների ծառայությունից): Օնլայն վճարումներ իրականացնելիս կարող եք օգտվել 3D Secure ծառայությունից:

Օգտակար տեղեկատվություն

Քարտային վճարումներ կատարելիս անհրաժեշտ է հիշել՝

- Քարտերով կարող եք վճարումներ կատարել այն առևտրի ու սպասարկման կետերում, որտեղ փակցված է տվյալ քարտային համակարգի լոգոտիպը:
- Քարտով վճարում կատարելիս՝ մինչև անդորրագիրը ստորագրելը, հավաստիացե՛ք, որ անդորրագրում նշված գումարը համապատասխանում է ձեր գործարքի գումարին:
- Քարտով վճարելիս միշտ պահե՛ք քարտը ձեր տեսադաշտում:
- Եթե հրաժարվում եք գնումից, ապա պահանջե՛ք չեղյալ համարել (VOID) ձեր վճարումը և պահե՛ք համապատասխան անդորրագիրը մինչև հերթական քաղվածքի ստացումը՝ համոզվելու, որ հաշվից գանձում չի կատարվել:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- Ապահովե՛ք ձեր PIN ծածկագրի գաղտնիությունը (այն պետք է պահպանել գաղտնի և հասանելի չդարձնել այլ անձանց): PIN ծածկագրով կատարված բոլոր գործառնությունների պատասխանատվությունը կրում եք դուք: Մենք պատասխանատվություն չենք կրում ձեր PIN ծածկագիրը երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով վճարային քարտի ոչ օրինական և ձեր կողմից չարտոնված օգտագործման համար:
- Քարտի կորստի կամ գողության դեպքում անմիջապես զանգահարե՛ք մեզ (+374 10) 56-20-36, (+374 10) 58-29-77 հեռախոսահամարով կամ «Արմենիան Քարդ» վճարահաշվարկային համակարգի (+374 10) 44-03-80 հեռախոսահամարով՝ հայտնելով քարտի ստացման դիմումի մեջ ձեր կողմից նշված գաղտնաբառը: Զանգից անմիջապես հետո քարտի գործողությունը կդադարեցվի:
- Քարտի կորստի կամ գողության մասին ՄԵԶ տեղեկացնելու հետաձգումը կարող է հանգեցնել ձեր քարտով այլ անձանց կողմից գործարքների կատարմանը:
- Մենք պատասխանատվություն չենք կրում ձեզ հասցրած այն վնասի համար, որը կատարվել է քարտը կորցնելու և մեզ հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում:
- Դուք պատասխանատվություն եք կրում քարտով կատարված բոլոր գործառնությունների համար մինչև այն պահը, երբ տեղեկացնում եք մեզ կորստի կամ գողության պատճառով քարտի գործողությունը դադարեցնելու անհրաժեշտության մասին: